

Քննարկված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի

« 02 » « 11 » 2016 թ. նիստում

Հաստատված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

տնօրենի « 29 » « 12 » 2016 թ.

թիվ 494 հրամանով



**« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ »**

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**ԿԱԴՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ**

## I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Կադրերի բաժինը ԳՏՊՔ-ի կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է ՀՀ օրենսդրության համաձայն, քոլեջի կանոնադրության և սույն կարգի հիման վրա:
- 1.2 Կադրերի բաժինը վերակազմավորվում կամ լուծարվում է կառավարման խորհրդի որոշմամբ՝ տնօրենի ներկայացմամբ:
- 1.3 Սույն կարգը լրացվում կամ փոփոխվում է ԳՏՊՔ-ի կառավարման խորհրդի որոշմամբ:

## II ԿԱԴՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- 2.1 Կադրերի բաժնի խնդիրներն են.
  - 2.1.1 Վարչատնտեսական, դասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմին աշխատանքի ընդունում, տեղափոխում, աշխատանքից ազատում:
  - 2.1.2 Աշխատողների անձնական գործերի վարում:
  - 2.1.3 Աշխատողների աշխատանքային գրքույկների հաշվառում և վարում:
  - 2.1.4 Աշխատանքից ազատվածների անձնական գործերի ամենամյա արխիվացում և քառամյա վաղեմությամբ գործերի հանձնում արխիվ՝ մշտական պահպանության:
  - 2.1.5 Հրամանագրքերի վարում:
- 2.2 Կադրերի բաժնի գործառույթներն են.
  - 2.2.1 Վարչատնտեսական, դասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի աշխատանքի ընդունման, տեղափոխման, աշխատանքից ազատման ձևակերպումների համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունում և հրամանների նախագծերի պատրաստում:
  - 2.2.2 Անձնական գործերում, հաստիքային ցուցակներում, քարտերում աշխատակազմին վերաբերող հրամանների արտացոլում:
  - 2.2.3 Աշխատանքային գրքույկներում հրամանների արտացոլում:
  - 2.2.4 Թոշակ ձևակերպելու և այլ հարցերի լուծման համար աշխատողների ստաժի վերաբերյալ տեղեկանքների պատրաստում:

## III ԿԱԴՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 3.1 Կադրերի բաժինը անմիջականորեն ենթարկվում է տնօրենին:
- 3.2 Կադրերի բաժինը գլխավորում է կադրերի բաժնի տեսուչը, որին նշանակում և պաշտոնից ազատում է տնօրենը:
- 3.3 Կադրերի բաժնի տեսուչը իրականացնում է կադրերի բաժնի աշխատանքների կոորդինացում և վերահսկում:

3.4 Կադրերի բաժնի տեսուչը պատասխանատվություն է կրում բաժնում իրականացվող աշխատանքների և հրամանագրերի վարման համար: